

## ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ և ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Իրավաբանական կրթության բարեփոխումների շրջանակում Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը (այսուհետ՝ Պալատ) կազմակերպում է փաստաբանների դպրոցի (այսուհետ՝ Դպրոց) ունկնդիրների և փաստաբանների հեռավար (դիստանցիոն) ուսուցում:

Հեռավար (դիստանցիոն) ուսուցումը համակարգված ուսուցման ձև է, երբ ունկնդրի և դասախոսի միջև անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացն իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցով: Հեռավար (դիստանցիոն) ուսուցման կիրառման նպատակը ունկնդիրների բնակության վայրերում կրթական ծրագրերի յուրացման հնարավորություն ընձեռելն է:

Հեռավար ուսուցման հիմքը կազմում են փաթեթային (քեսային), ինտերնետ և հեռահաղորդակցային տեխնոլոգիաները: Թույլատրվում է տարբեր տեխնոլոգիաների զուգակցումը:

«ՀՀ փաստաբանների դպրոց» հիմնադրամի կառավարման խորհրդի՝ 23.05.2014թ. թիվ 5/6-Լ որոշմամբ հաստատված «ՀՀ փաստաբանների դպրոց» հիմնադրամի ընդունելության քննության կարգի (այսուհետ՝ Կարգ) համաձայն՝ դիմորդների ընդունելությունը կատարվում է առանձին մրցույթով, իսկ ուսուցումը առկա (ստացիոնար) և հեռավար (առցանց) կարգով:

Կարգի համաձայն՝ հեռավար ուսուցման դիմորդ է համարվում այն գործունակ ֆիզիկական անձը, ով ունի բարձրագույն իրավաբանական կրթություն և նրա վերջին մեկ տարվա փաստացի բնակության վայրը գտնվում է Երևան քաղաքից նվազագույնը 80 (ութսուն) կմ հեռավորության վրա:

Հեռավար ուսուցման գործընթացն իրականացվում է հետևյալ ձևերով՝

1. լսարանում դասախոսի (մեթոդիստի) և ունկնդրի անմիջական հաղորդակցման կամ էլեկտրոնային կապի միջոցների օգտագործման միջոցով,
2. ուսումնական նյութերով ունկնդրի ինքնուրույն աշխատանքով:

Հեռավար ուսուցման ձևով դասավանդվող առարկաները (թեմաները) որոշվում են հաշվի առնելով այդ եղանակով դասավանդման արդյունավետությունը:

Ունկնդիրները դպրոցից ստանում են ուսումնական պլանով տվյալ առարկայի ինքնուրույն ուսումնասիրման անհրաժեշտ ուսումնամեթոդական փաստաթղթերի փաթեթներ, որոնք տրամադրվում են թղթային կամ էլեկտրոնային տեսքով, ինչպես նաև ինտերնետ ցանցով: Ունկնդիրների հետ կապն էլեկտրոնային միջոցներով իրականացվելու դեպքում, յուրաքանչյուր ունկնդրի համար Դպրոցում կարող է բացվել անհատական էջ՝ համապատասխան ծածկագրով:

Հարկ է նշել, որ ուսուցման համակարգում հեռավար ուսուցումը հիմք է ընդունում մարդկության սկզբունքը, որի ոչ մի անհատ՝ աշխարհագրական կամ ժամանակավոր մեկուսացվածության, սոցիալական անապահովվածության և ֆիզիկական անբավարարության կամ արտադրական ու սեփական գործերով զբաղվածության հիման վրա, ուսումնական հաստատություններ հաճախելու անհնարինության հետևանքով չպետք է զրկված լինի սովորելու կարևորագույն հնարավորությունից:

Հեռավար ուսուցումն այսօր գոյություն ունեցող մի շարք տեխնիկական խնդիրներով հանդերձ՝ որպես ուսուցանման արդիական մեթոդ , լայն հեռանկարներ ունի և արագորեն զարգացում է ապրում: Ավելի շատ ուսումնական կազմակերպություններ, հիմնարկներ ուսուցման համակարգի մեջ մտցնում են հեռավար ուսուցման տեխնոլոգիաները:

«Փաստաբանների պալատի  
երիտասարդական խորհրդի անդամ  
փաստաբան Մարինե Ֆարմանյան»